ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2018 թվականի N 139-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի N 143-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2015 թվականի հունիսի 2-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2009 թվականի նոյեմբերի 4-ի 290 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին»* N 143-Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1) ***Ռոմանոս Պետրոսյան*** - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետ,

2) ***Գուրգեն Ավետիսյան*** - հանձնաժողովի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ,

3) ***Մհեր Եղիազարյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,

4) ***Առաքել Խաչատրյան*** - հանձնաժողովի անդամ, «Կոտայք ջրօգտագործողների ընկերության» գործադիր տնօրեն *(համաձայնությամբ)*,

5) ***Արտակ Խալաթյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի Կոտայքի մարզային կառույցի ղեկավար *(համաձայնությամբ)*,

6) համապատասխան համայնքի ղեկավարը - հանձնաժողովի անդամ, *(համաձայնությամբ)*,

7) համապատասխան համայնքի գյուղատնտեսության գծով մասնագետ - հանձնաժողովի անդամ, *(համաձայնությամբ)*.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թվականի հունիսի 13
ք. Հրազդան